ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

<<12>> մայիսի 2023 թ. քաղաք Մարալիկ

2023 թվականի մայիսի 12-ին ժամը 15^{00}–ին ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում, Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց թիվ 1/ տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու արտահերթ նիստը:

Համայնքի ավագանու նիստը վարում էր Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանը:

Նիստն արձանագրում էր Անիի համայնքապետարանի աշխատակազմի գործավար՝ Սաթենիկ Սահակյանը:

Նիստին մասնակցում էին՝

<<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ,
2. ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
3. ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆԸ,
4. ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆԸ
5. ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆԸ,
6. ՀԱՍՄԻԿ ՋԱՏԻԿՅԱՆԸ,
7. ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆԸ,
8. ԳՈՌ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ
9. ԺԻՐԱՅԻ ԱԼԵՔՅԱՆԸ
10. ՆԱՐԻՆԵ ՍԱՐՈՅԱՆԸ,
11. ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆԸ:

Համայնքի ավագանու նիստին անհարգելի բացակայում էին՝

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ 7 մանդատ ստացած, Անի համայնքի ավագանու ընտրված և գրանցված անդամներ՝

1. ԱՐՏԱԿ ՍԱՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ,
2. ԱՎԵՏԻՔ ԱՐՏՈՒՇԻ ՆԱԶԱՐՅԱՆԸ,
3. ԿԱՏՅԱ ՋԻՎԱՆԻ ՆԱԽՇՔԱՐՅԱՆԸ,
4. ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳԻ ՆԻԿՈՅԱՆԸ,

5.ԶԱՎԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ,
6.ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿԻ ՄԿՈՅԱՆԸ,
7.ԱՆՆԱ ՀԱԿՈԲԻ ԱՎԴԱԼՅԱՆԸ:

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ 2 մանդատ ստացած,
Անի համայնքի ավագանու ընտրված և գրանցված անդամներ՝

1. ԱԳՈՒՆ ՎԱՐԴԱՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
2. ԳԱՅԱՆԵ ԳԱՌՆԻԿԻ ԱՎԵՅԱՆԸ:

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ՝ 1 մանդատ ստացած,
Անի համայնքի ավագանու ընտրված և գրանցված անդամ՝

1. ԱՐՄԵՆԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԻ ՆԱՋԱՐՅԱՆԸ:

Նիստին մասնակցում էին Անիի համայնքապետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատակիցներ, Անի համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրեններ, համայնքի ներկայացուցիչներ:

Նիստը վարող՝ Արման Սարիբեկյանը համայնքի ավագանուն տեղեկացրեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:

Տեղեկացվեց, որ Անի համայնքի ավագանու ընտրված և գրանցված 21 անդամներից համայնքի ավագանու նիստին մանակցում են 11-ը, այսինքն քվորումն ապահովված է:

Անի համայնքի ավագանու հերթական նիստը հայտարարվեց բացված:

Զեկուցողը տեղեկացրեց, որ ավագանու արտահերթ նիստ հրավիրելու անհրաժեշտությունն առաջացել է իմ նախաձեռնությամբ, որը հիմնականում պայմանավորված է եղել համայնքի 2023 թվականի բյուջեն քննարկելու համար:

Զեկուցողը նշեց, որ ավագանու անդամների տրամադրված են այսօրվա նիստի օրակարգային հարցերի ավագանու որոշումների նախագծերը:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Անի համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգի նախագիծը.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 12-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.
(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին:

(Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման,գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան)

3) Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում սուբվենցիոն ծրագրեր իրականացնելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Անի համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2023 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու նիստի օրակարգը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով հաստատվեց համայնքի ավագանու նիստի օրակարգը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի, 65-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 12-ի ժամը 15^{00}-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 12-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին:

(Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյան)

3) Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում սուբվենցիոն ծրագրեր իրականացնելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Անի համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին;

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2023 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-2:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին:

Զեկուցման համար ձայնը տրվեց Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անժելա Սաղաթելյանին:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2023 թվականի բյուջեն՝ համաձայն N N 1-3 հավելվածների:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-3:

3) Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում սուբվենցիոն ծրագրեր իրականացնելու մասին:

Զեկուցողը տեղեկացրեց, որ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցին ծրագրերի իրականացման ընթացակարգերը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի16-ի <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին>> N 1708-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման>> և <<Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտի մշակման, ներկայացման, քննարկման և հաստատման >> կարգերի համաձայն:

Համայնքի ավագանուն տեղեկացվեց, որ համայնքապետարանը նախընտրելի համարված ծրագրերի ընտրությունն իրականացրել է համայնքի շահառու բնակավայրերի բնակիչների շրջանում անցկացված հարցումների և հանրային լսումների արդյունքում: Հաշվի են առնվել բնակավայրերի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների ուսումնասիրության և գնահատման արդյունքները:

Տեղեկացվեց, որ որոշման նախագծում ներառված ծրագրերը վերջնական չեն և ըստ անհրաժեշտության կարող են կատարվել համապատասխան փոփոխություններ:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-4:

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Անի համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին:

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի թիվ 85-Ա որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի օրինակելի կանոնադրության>> 11-րդ կետի պահանջի կատարմամբ: Համաձայն որի, ՀՀ Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում, համայնքի ավագանին պետք է առաջադրի ՀՀ Շիրակի մարզի Անիի համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող խորհրդի անդամ:

Համայնքապետարանը նշված թեկնածությունը առաջադրելու համար հրապարակել է մրցույթ, սակայն որևէ անձի թեկնածության վերաբերյալ առաջադրում չի ներկայացվել: Հետևաբար նշված կանոնադրության համաձայն այդ պարագայում, խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամը կարող է առաջադրվել համայնքի ավագանու կազմից՝ ինքնաառաջադրման սկզբունքով, սահմանված չափանիշներով: Համապատասխան թեկնածու չլինելու դեպքում տվյալ համայնքից խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ է ընտրվում ավագանու՝ տարիքով ամենաերիտասարդ անդամը:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆԴԱՄ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի թիվ 85-Ա որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության մարզպետինառընթեր երիտասարդական խորհրդի օրինակելի կանոնադրության>> /հետագայում՝ օրինակելի կանոնադրություն/ 11-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի թեկնածություն առաջադրելու համար 2023 թվականի ապրիլի 26-ին հայտարարված մրցույթին հայտեր չեն ներկայացվել, իսկ Անի համայնքի ավագանու անդամ Արտակ Անդրանիկի Շաբոյանը բավարարում է օրինակելի կանոնադրության 8-րդ կետով սահմանված չափորոշիչներին.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդում, որպես Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնող խորհրդի անդամ, առաջադրել Անի համայնքի ավագանու երիտասարդ անդամ՝ Արտակ Անդրանիկի Շաբոյանի թեկնածությունը /հաշվառված՝ մարզ Շիրակի, Անի համայնք , գյուղ Սառնաղբյուր, 2-րդ փողոց, տուն 17, հեռախոս՝ 093-81-09-65/:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

<u>Օրակարգ-5:</u>

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2023 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի դրույթով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2023 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2023
թվականի մայիսի 12-ի N 20-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

/Հ	Համայնքի կողմից մատուցվող ծառայության անվանումը	Սահմանված դրույքաչափերը /ՀՀ դրամ/
.	Մարալիկ քաղաքի մշակույթի տան մեծ դահլիճը օգտագործման տրամադրելու համար՝ մեկ օրվա համար	70 000
.	Անի համայնքի Մարալիկի մշակույթի տան փոքր դահլիճները, սրահները, համայնքային ենթակայության արտադպրոցական հիմնարկների և կազմակերպությունների /երաժշտական դպրոց, արվեստի դպրոց, մանկապատանեկան մարզադպրոց/, գյուղական բնակավայրերի մշակույթի տների, ակումբների, համայնքային կենտրոնների դահլիճները և սրահները օգտագործման տրամադրելու համար՝ մեկ օրվա համար	30 000
.	Անի համայնքի Մարալիկ քաղաքի Անիի համայնքապետարանի վարչական, Մշակույթի տան, Գեղարվեստի դպրոցի, Երաժշտական դպրոցի շենքերից	500

	վարձակալության իրավունքով տարածք տրամադրելու համար, մեկ քառակուսի մետր տարածքի ամսեկան վարձավճարի չափը սահմանել	
.	Անի համայնքի Մարալիկ քաղաքի և գյուղական բնակավայրերի մարզադաշտերը օգտագործման տրամադրելու համար՝ մեկ օրվա համար	20 000
.	Անի համայնքի սեփականություն հանդիսացող Մարալիկ քաղաքի վարչական տարածքում գտնվող հենասյուները կապի մալուխների միացման համար օպերատորներին տրամադրելու վարձակալության վճարի չափը՝ յուրաքանչյուր հենասյանի համար սահմանել՝ ամսական	400
.	Անի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղական բնակավայրերի վարչական սահմաններում առկա հենասյուները կապի մալուխների միացման համար օպերատորներին տրամադրելու վարձակալության վճարի չափը՝ յուրաքանչյուր հենասյանի համար սահմանել՝ ամսական	400
.	Անի համայնքի գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարի նստավայրի վարչական շենքերից օգտագործման նպատակով տարածքներ տրամադրելու համար 1 քառակուսի մետր մակերեսի վարձակալության վճարի չափը սահմանել ամսական	500
.	Համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի /շենք-շինությունների/ նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխության ծառայության դիմաց, ֆիզիկական և իրավաբանական անձանց համար վճարի չափը սահմանել 10 000 դրամ, գումարած շինության ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար հավելյալ՝	200 դրամ
.	Համայնքի վարչական տարածքում /բնակավայրերում/ գտնվող, քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության և /կամ/ օգտագործման իրավունքով պատկանող հողամասերի նպատակային նշանակության փոփոխության ծառայության դիմաց վճարի չափը սահմանել՝	50000 դրամ
0.	Համայնքի վարչական տարածքում /բնակավայրերում/ գտնվող, քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության և /կամ/ օգտագործման իրավունքով պատկանող հողամասերի գործառնական նշանակության փոփոխության ծառայության դիմաց վճարի չափը սահմանել՝	30000 դրամ

1.	Համայնքի տարածքում համայնքապետարանի կողմից ծառայությունների մատուցման համար /այն աշխատանքների համար, որոնք օրենքով սահմանված կարգով չեն պահանջում շինարարության թույլտվություն/ սահմանել տեղական վճար՝ մեկ միավորի համար	3 000 դրամ

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավարը հայտարարեց, որ Անի համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարվեց փակված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ- 11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

Արձանագրեց՝ Ս. Սահակյան _____

<<12>> մայիսի 2023 թ.
քաղաք Մարալիկ